հսկա է։ Երկուսի գլուխն էլ ածիլած է, միայն գագաթներին թողած է մի–մի փունջ։ Շալակներին բերում են արջ եւ որսի այլ կենդանիներ։

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– (Խորդալով ցած է դնում բեռը) Հրա՛մմմ…

ՂԱՌԱՂՈՒՌԱ.– Հըա՛մմմ…(Նոյնպէս ցած է դնում բեռը։)

ՓԵՐԻՇԱՆ.– Մեծ ապեր, մենք բան գիտենք։

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Հըա՛մ…Ի՞նչ,

ՓԵՐԻՇԱՆ.– Մարդահոտ է գալիս…

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– (Ցոյց տալով ձախ) Հըա՛մմ.. ա՛յ, Ղուզղունը բերում է, ճամփին գտանք։ Հրա՛մ…

ՂՈՒԶՂՈՒՆ.– (Ներս է մտնում ձախից՝ շալակին Տէրտէրը։)

ՓԵՐԻՇԱՆ.– Բո՛, էս ինչ բան է,

ՂԱՌԱՂՈՒՌԱ.– Ո՛ւր քարշ տուիք սրան, հիւանդութիւն կբերի հետը։ Տարէք դեն գցէք։

ՓԵՐԻՇԱՆ.– Ապի, ինձ տուէք՝ խաղամ։

ԽՈԶԵՆԻ.– (Մոտենալով Տէրտէրին, ժպտալով եւ հետաքրքիր նայում է նրան, եւ ապա գրկում ու գցում Ղորոնթիի գիրկը։)

ՂՈՐՈՆԹԻ.– (Գցում է Ղուզղունի գիրկը։)

ՂՈՒԶՂՈՒՆ.– (Գցում է Ղառաղուռայի գիրկը։)

ՂԱՌԱՂՈՒՌԱ.– (Գցում է Դանգիզի գիրկը։)

ՓԵՐԻՇԱՆ.– (Լաց է լինում) Վեա՛,

ԴԱՆԳԻԶ.– Փի՛, մեռելի հոտ է գալիս, դեն գցէք։

ՂԱՌԱՂՈՒՌԱ.– Ջո՛ւրը գցէք, թող տանի…

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Չէ՛Է՛Է՛… Կացէք բան պիտի հարցնեմ։

ՏԷՐՏԷՐ.– Ա՛ման, օրհնեալներ, բա՛ց թողէք, սիրտս կճաքի։

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Կա՛ց… Ինչո՞ւ հարեւանութիւն չէք անում էլ… Ինչո՞ւ քանի օր է էլ աղ չէք ուղարկում մեզ… Հըա՞մմմ…

ՏԷՐՏԷՐ.– (Վեր թռչելով) Բոլոր աղը մատաղի ենք տուել, օրհնեալ։ Աղ չի մնացել։

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Մատաա՛ղ… Հը՛, ինչ մատաղ։ կա՛մ,

ՏԷՐՏԷՐ.– Մի քաջ մարդ է ընկել մեր աշխարհքը, մատաղ ենք անում աստծուն, որ նրա պատուհասից մեզ ազատէ։

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Ի՞նչ մարդ է, անունն ի՞նչ է։ Հըա՛մ,

ՏԷՐՏԷՐ.– Քաջ Նազար,